

Ա. ԽԱՐԱՏՅԱՆ

ԴԱՐՁԱԼ ՄՈՌԱՑՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԽԱՉԱՏՈՒՐ  
ԷՀՐԱՄՃԱՆՑԻ ՄԱՍԻՆ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1947 թ.  
№ 6 «Տեղեկագրից»

891.99(09) Էժիրան Տօնական 87854

hu-31 Huun wiyquwi, (L.)

Կործուց օսմանյան բանակ  
ստորև հաշվառութեան պահին  
գումար:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈԴԵՄԻՅԱՅԻ  
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հաստիքական գիտություններ 1947, № 6

Общественные науки

891.99.092 [Հայկական]

Ա - 31

Ա. Յանիկ Խառաջայան

ԽՍՀՄ ԳԱ 1981 թ.

ԴԱՐՁՅԱԼ ՄՈՌԱՑՎԱԾ ԲԱՆԱՏԵՂԸ ԽԱԶԱՏՈՒՐ ԷՇՐԱՄՃՅԱՑԻ  
ՄԱՍԻՆ

«Մի մոռացված հայ բանաստեղծ» վերնագրով 1940 թվին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Գիլիալի Տեղեկագրի № 4—5-ում (73—80 էջ) պրոֆ. Լ. Մելիքսեթի բնելը լույս է ընծայել ցարական ցեղազուրայի կողմից լուսթյան մաշտուռը էնթամճյանցի երկերի ժողովածությունը ։ մասի ձեռագրատետրի (որը գտնվում է Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետհամալսարանի գրադարանում) մասին մի հաղորդագրությունն վերջիր Կովկասյան ն. ցեղազուրային կոմիտեի արթիվում հայուարերվեց վերոհիշյալ հեղինակի (Խաչատուր էնթամճյանցի կամ Աշոք Խնայիի) երկերի ձեռագրատետրի 11 մասը (Փոնդ № 114, գործ № 930)։

Այս ձեռագրատետրի շապկի վրա գրված է.

Շարունակություն «Կարենի սրնգին»

II

Խաչատուր էնթամճյանց

Տակը մի այլ ձեռքով կարմիր մատիտով գրացերեն ավելացրած է  
1888 թվուն (թվին)

A 3/692

Ձեռագրատետրը դավթարի ծավալ ունի, բազկայած է 21 երեթից և պարունակում է 54 երգ, որոնք բոլորն էլ համարակալված են և սկսվում են № 65-ից, այսինքն շարունակությունն են հանդիսանում 64 երգ պարունակող գարենի սրբնաց» ձեռագրատետրի Ա. մասին, որի մասին վերում ասացինք։

Մեր ձեռքի տակ գտնված ձեռագրատետրի մեջ տեղափորված 54 երգ գոյ 10 երգը ամբողջովին ջնջված է կարմիր թանաքով և կարմիր մատիտով (ըստ երեսութիւն, թանաքով ջնջել է գրաքննիչ Կարախանովը, որովհետեւ նրա մակագրությունը ձեռագրատետրի վերջին թերթի վրա կարմիր թանաքով է կատարված, իսկ կարմիր մատիտով ջնջել է մի այլ անձնագործություն, որը ձեռագրատետրի շապկի վրա խոշոր տառերով գրել է՝ 1888 թվին), իսկ մեկ երգից ջնջված են կտորներ («Բորանի» № 80, էջ 92—94)։

Լիովին ջնջված են հետեւյալ երգերը.

1. «Տաճար» № 79, 16 տուն, 64 տող, էջ 90.

2. «Չտեսար» № 81, ա. մաս, 3 տուն, 12 տող, էջ 95.

3. » № 82, բ. մաս, 3 առան, 12 տող, էջ 95.

1 Ջեկուցված է Թբիլիսիի Կոմունի անդամ՝ Պետ. Համալսարանի հայոցիտության ամբողջ ներսին 1946 թ. փետրվարի 23-ին և նույն համալսարանի ասպիրանտական գիտական սեսիոյում՝ ապրիլ 27-ին։

4. «Չուեսար» № 83, գ. մաս, 3 տուն, 12 տող, էջ 96.  
 5.      »      № 84, գ. մաս, 3 տուն, 12 տող, էջ 96.  
 6. «Լանկ-Թևուրն ի Մուշ» № 88, 10 տուն, 32 տող, էջ 98—99,  
 7. «Փելեկ» № 94, 3 տուն, 12 տող, էջ 102.  
 8. «Ճիլոյներն ի Պայազեա» № 107, 10 տուն, 32 տող, էջ 109—110.  
 9. «Տուպեյթ» № 108, 4 տուն, 16 տող, էջ 110.  
 10. «Նոր զինվորը» («Հավալար պուլատլանդի» եղանակով) № 118,  
     9 տուն, 36 տող, երկուական տող կրկնությունով. էջ 116.  
 Գրվածքի վերջին էջի վրա 1888 թվին մակագրված է ոռուսերն լեզ-  
 վով (Կարմիր թանաքով).

Дозволено Цензурою. Тифлис, 1-го июля  
 1888 г. с исключениеми  
 Младший цензор: Григ. Карабаханов.

Զնայած այս թույլատլությանը, Աշբա-Ինայիի ձեռագրատերը բախտ  
 չի ունեցել հրատարակվելու:

1890 թվին նույն այս ձեռագրատերի շապկի 2-րդ էջի վրա մակա-  
 գրված է աև թանաքով հետևյալը.

По журналу цензурного комитета 12-го сентября [18]90 г. опре-  
 делено: в виду 22 и 10 б ст. Уст. Ценз., Изд., [18]86 г. напечата-  
 ние воспретить и удержать при делах комитета.

Председатель комитета К. Якимов  
 Секретарь Н. Мелик-Нубаров.

\* \* \*

Ցարական ցենզուրայի կողմից արգելված հեղինակը տենչում է տես-  
 նել հայրենիքն ազատ և լուսավորված. ուստի և կոչ է անում ծառայել  
 նրան, նրա առաջադիմությանը, չմատ և ետ ու թերի:

Սրտով ուխտելը լավ է,  
 Անկիրթ ապրելը բավ է:  
 Վարժինք առաջ երթալու,  
 Հեռանանք անպետ կավե:

Ուխտենք օգնել ընկիրին,  
 Մնացել ենք գերի.  
 Ուխտենք սիրել հայրենիք,  
 Չմանք հա ու թերի:

Լինեմ ժատաղ այն հողին,  
 Որ կարոտ է միշտ ցողին.  
 Չտալ գայլին ու արջին  
 Եվ կամ կեղծավոր գողին:

(«Նոր զինվոր» «Հավալար պուլատլանդի» եղանակով  
 № 118, էջ 118):

Հայ ռամիկը հաճախէ կեղեքվել ու հալածվել արևելյան բարբարոսների կողմից, Աշուղ-բանաստեղծը խորին վշտով ու վրդովմունքով հիշում է Լենկ-թեմուրի արշավանքը՝ «Լանկ-Թեմուրըն ի Մուշ» (№ 88, էջ 98) երգում, «ը լիովին ջնջված է գրաքննիչի կողմից», Երզը գրված է Մշո բարբառով և հայկական փողկորի մի գեղեցիկ նմուշ է հանդիսանաւմ, միաժամանակ կարևոր նյութ ներկայացնելով հայ բարբառագիտուրյան համար:

Անունտի մնա Լանկ-Թեմուր,  
Խետափի բերիր խանչալ ու թուր,  
Խատուցիր դու մըր խաց ու ջուր,

Վայ անիծուկը, վայ Լանկ-Թեմուր,  
Քո սուրաթնի թող ծածկա մուր:

Մընք դ՞մը էրթանք մըզի հավար,  
Թալան արեց մալ ու տավար.  
Իմալ գտնենք ցորեն, ձավար:

Օլուզ-չոլուզ խեղճ ու տկլոր  
Մընք դ՞մը տանենք զըմմեն բոլոր.  
Խաղար անգամ եկավ էտ դոր:

Անշուշտ, հեղինակը նկատի ունի ոչ միայն Լենկ-Թեմուրին, այլև օսմանցիներին» և առհասարակ օտարերկրյա բանակալներին: «Ճիլոյներն ի Պայազետ» երգում (№ 107, էջ 109), որ նույնպես լիովին ջնջված է շարական գրաքննիչի ձեռքով, բոլորում է «օսմանյան օգնության» գեմ:

Օսմանյան օգնություն... ճիլոյներ հասան.  
Բարբարոս քրդական... միջոց անսահման.  
Պայազետի ձայներն... երկինք բարձրացան.  
Տեսեք հայ աղջկան... լողա մեջ արյան.  
Զկա[ն] հայ մանուկներ... ի զուր զոհեցան:  
Անգութ են ճիլոյներ... փորձելով նիզակ.  
Մայլերը կ'փնտրեն... յուր որդին միակ.  
Սրտերի ակոսը... լիցուցավ դիակ:

Իսկ նույն երգի վերջում կոչում է.

Զարդարանք, պաճուճանք... թողեք աշխարհին.  
Հույս զրեք ու գործեք... ի սեր անճարին.  
Գուցե նա այցելե... աղքատ անկարին:

Օտարերկրյա զավթիչների բարբարոսություններն ստիպում են հային բռնել պանդխառըթյան ձանալարին և կրել նրա բրենը դժվար ու ծանր»:

Զեռք տնը ինձի, մայրիկ, որդիդ անճար է.  
Պանդխառըթյան բեռք դժվար ու ծանր է:

(«Կարենցի քրիտասարդը», № 112, էջ 112),

Մի այլ բանաստեղծության մեջ ինային գրում է.

Օտարի դուռը ման գալով հաց եմ ասում, մւմ պետքն է.  
Բոլոր գոներին զարնելով բաց եմ ասում, մւմ պետքն է.  
Ծարավ, քաղցած, մերկ ու բոպիկ շատ երկրներ ման գալով,  
Անողորմ մարդոց գոները լաց եմ ասում, մւմ պետքն է:  
(«Ո՞ւմ պետքն է», № 73, էջ 87):

«Թափառական կոռուկին» բանաստեղծության մեջ (№ 117, էջ 115)  
«Հիվանդ եմ, օ՛հ հիվանդ եմ» երդի եղանակով պանդուխտ հեղինակը խընդ-  
րում է կոռուկին.

Անցիր այս խիտ անտառեն,  
Տար համբավը անձարեն,  
Տար բարեց թշվառեն,  
Հերթք է սիրու վառեն.  
Ասա հազար ցավիրով  
Կզամ բարձր նավերով,  
Թափառական անունը  
Կտրեց աչքերիս քունը,  
Սրտիս մեջ հազար կարոտ  
Կա զգիս կարմիր նարոտ:

Օտարերկրյա բռնակալներից խուսափած հայ ժողովուրդը ընկել է  
անհյուրընկալ միջավայր: Աշըդ-ինային տառապում է նրանց անարդա-  
րություններից: Նոր միջավայրում, ինչպես և «բախտախնդիր միսսիոն-  
նարքի» մեջ նա չի գտնում ճշգրտառություն: «Չաեսար» բանաստեղծու-  
թյան մեջ (№ 83—84, էջ 96), որն ամբողջովին ջնջված է զրաքննիչի  
կողմից, բանաստեղծը խարազանում է հայ բողոքականներին:

Ումից է իմ այս զանգատը, կամ թե որին անիծեմ.  
Կացնի կոթը անտառիցն է. ծառն ասաց ինչ անեմ,  
Շատերն ինձ ասել են թե ինային կտրեմ,  
Հասկացել որ շատերում ճշմարտություն չմնաց:  
Ո՞վ, բարերար սրտագետ Տեր, ազաչում ենք՝ հերթք է.  
Կրոնակից-ազգակիցից հալածվում ենք՝ հերթք է.  
Բախտախնդիր միսսիոնարք համակրում ենք՝ հերթք է.  
Մեր տերերից թեև վատ են, բայց հովվություն չմնաց.

Մի այլ երդի մեջ.

Շապիկս պատռած, կամ՝ տունս բլած,  
Գլուխս են կոտրած ու հացս խլած,  
Սիրուն աներիս մեջ խոտեր կան ծլած.  
Ինային անզարման, սազը քեռուն է:

(«Սազը քեռունն է» № 70, էջ 85):

Մեկ ուրիշ երդի մեջ բանաստեղծը հայ ժողովրդի բերանից ողբում է.

Ամբարներս զատարկ, փորներս քաղցած,  
Գլուխներս բաց, սաստիկ մերկացած,  
Ինային էլ չունի զգեստներ կարած...

(«Ծույլ», № 69, Էջ 85):

Հեղինակը ծաղրում է ժլատ հաշուստներին, մասնավորապես նըանց, ոլոնց քսակի բերանը վակ է հայրենիքի համար:

Կաթողությունդ լավ է, քսակդ լիք.  
Ինչո՞ւ դու կապել ես բերանն այդպես ձիգ,  
Քեզանից լնչ օգուտ ունի հայրենիք,  
Կինդ էլ կարող չէ օգուտ ստանալ:

(«Ծակ աչք», № 89, Էջ 99):

Ինային գուրս է եկել ժողովրդի ծոցից, իր ողջ էությամբ նվիրված է նըան և ժամանակ չունի երգելու «նարկեղ» կամ «նունուֆար».

Ումամիկ եմ ես, սիրաս ուամիկ, լեզուս ու խոսքս ուամիկ.  
Անձս ուամիկ՝ անվանելին ընտրված եմ մեկ հատիկ.  
Նարկեղները աղաչեցին՝ զրկեց ցողդ հանդարտիկ.  
Նստել եմ ես ավելակում, չկան քրթում նունուֆար:

(«Մուխամենդ», № 65, Էջ 82):

Բանաստեղծի երգերը լի են ինքնակենսազրական տեղեկություններով: Վերջին հատվածից կարելի է հետեցնել, որ հեղինակն ունի ուամկական ծագում: Նա եղել է որբ, մեծացել է «աղքատ» ու «անտեր», «անհայր», անմայր ու անսեր». Եղել է «մուրացկան» (№ 70, Էջ 85): «Տուպեյիթ» բանաստեղծության մեջ (№ 108, Էջ 110) նա ասում է.

Հայր չունեմ՝ ճամբաս նկատե,  
Մայրիկ չունեմ՝ կյանքը մաշե,

Նույն երգից պարզվում է, որ օտարերկրյա զավթիչների բարբարոսությունները զգացել է իրեն կաշվի վրա:

Աչքս ճամբան մնացին,  
Սիրաս վասեցին խարկեցին,  
Տունս քանդեցին՝ գնացին,  
Չթողին ինձ բուն սիրելի:

Կամ՝

Գայլը մատակ մեր փարախը, լափեց զառդ, Ինայի.  
Երեսուն տարվա հասակում անցել է իմ տարիքու:

(«Հասակս», № 100, Էջ 104):

Հեղինակը անձաբացած բոնել է՝ պանդխմության ճանապարհը.

Աղքատություն եկավ բաղդիս, մարավ սիրտս նոր վառված.  
Եղա պանդուխտ թափառական, հարստություն չմնաց:

(«Չափսարք», № 83, էջ 96):

«Ծարավ, քաղցած, մերկ ու բոբիկ շատ երկներ ման գալով, անողում  
մարդոց գոները լցա» է ասել («Ռում պետքն է», № 73, էջ 87):  
«Բորանի» (№ 80, էջ 92) երգի մեջ ասում է.

Տեսել եմ երկներ անթիվ, անհամար,  
ի զուր չարչարվեցա, չունեցա մեկ ճար:

Հեղինակը առետրական նպատակներով երկու տարի եղել է Մուշում:  
Խմել է Մշո «Կարմիր գինին» և «Երիբատի ջուրը սառը»։ կերել է Մշո  
«գառը» և «Քաղցր խաղողը»։ Ծանօթ է նրանց սովորություններին («Մշխ-  
տոր», № 86, էջ 97): Եղել է «Թորթում» և Սպեր գալառներում, նույնիսկ  
ճանաչում է այստեղի բնակիչներից ոմանց («Բորանի», ծանոթություն  
№ 80, էջ 92):

Աշըդ-Ինայիի երգերից պարզվում է, որ նա կը է սոսկալի տառա-  
պանքներ, չունի «փող ու համբավ» («Ծույլ», № 69, էջ 85): Նա գեռ «երի-  
տասարդ» է, բայց իրեն զգում է «ծերացած»։ «Դիվանի» բանաստեղծության  
մեջ (№ 102, էջ 107) խնդրում է բժշկին, որ չքննի իր ցավը, որ իր «վեր-  
քերը գեղ չեն ուղեա»։

Սիրու կոտրած, կուրծքս ջարդված, երակներս՝ անդադար.

Անկարող եմ ես պատմելու, դու լսե, բավ է բժիշկ:

Կամ՝ մի այլ տեղ.

Հասակս գեռ երիտասարդ ծերացել է ալիքս,  
Բազմանալով մտածունքս շատացել է տալիքս:

(«Հասակս», № 100, էջ 104):

Անցյալ դարի 70-ական թվականների հեղինակը կը է անհամար  
դրկանքներ։ Նրա հույսերը մնացել են «թերակատար» («Հասակս», № 100,  
էջ 104), և այս բուրքի գեմ նա հնարավորություն չունի բողոքելու, որով-  
հետեւ ցարական բռնապետությունը «կապել է» նրա «արձակ լեզուն» («Մու-  
խամմեզ», № 65, էջ 82):

Հասարակական ու սոցիալական տառապանքների հետ միասին հեղի-  
նակը տանջիում է անարգված ու դավաճանված սիրո պատճառով։ Այս  
տրամադրությունը կարմիր թելով անցնում է նրա բոլոր սիրային երգերում։

Սիրում եմ պատկերը աղնիվ Վարդառիս։<sup>1</sup>

Նա է ինձ միակ ընտիր բարերար:

<sup>1</sup> Վարդառիս անվան հիշատակությունն ասիթ է տալիս կը ին անդամ հաստատելու, որ Աշըդ-Ինային՝ Խաչատոր Էջրամճանցը հեղինակն է 1887 թ. Թբիլիսիում հրատարակ-  
ված «Վարդառիս» կամ 19-րդ դարու զոհը երկի հմտությունների Ակադեմիայի հայկական Փիլատի Տեղե-

Երանի ինձ ձայներ—հերիք է վառիս,  
Թափառիս ու լնկնիս այդպիս սարեսար:

Բայց այդ սերը նրան երջանկություն չի բերել: «Դանգատ» Երգում (№ 78, էջ 89) ասում է.

Սրտից չի վերջանալ անմարելի սիրո բոցը,  
Մինչև երկինք սյուն է կանգնել հառաջանքը և կոճը.  
Պարզ էր սերդ, որ սիրեցի, բաժինս եղավ հնոցը...

Մի քիչ ներքեւ՝

Բաժանվեցար դու ինձանից, դժոխք լինի քո տեղը...  
Խեղա ինայիս աղաչեցի, չնայեցի երեսին...

Միրելն անարգել է նրա սերը և ճարել ուրիշին.

Սերս անարգեցիր, լույսս մարեցիր,  
Ինձ թշվառ թողիր, ուրիշ ճարեցիր,  
Ինայու պատմնը դու որ կարեցիր,  
Բոլոր աշխարհ տեսավ, ես ում բաժբասեմ:

(«Դթա», № 95, էջ 102):

Դավաճանված սերը լրացրել է նրա «անբաղդության ցուցակը»: Նրա համար «անհոտ խոտ է հիմա լավ մանուշակը» («Դրեցի», № 67, էջ 84):

Պարզվում է նույնական, որ հեղինակն ունեցել է Մկրտիչ անունով զավակ: «Մկրտիչին» երգում (№ 93, էջ 101) Մկրտիչին զովում է, նրան անվանում է «ազնիվ զավակ, սիրուդ բարի». հորդորում է լինել պարկեցած և համեստ:

Աշգե-Ինային տիրապետում է, բացի իրեն ժամանակակից գրական լրդից, նաև Մշո բարբառին («Լանկ-Թեմուրն ի Մուշ», № 88, էջ 98—99): Ծանոթ է նաև Քրանսելենին, բայց՝ ապրելով XIX դարի 70-ական թվականների հայկական իրադարձությունների եռուն ըրջանում, երբ օտարելրկրացի «միսիոնարքը» (այսինքն կաթոլիկները) իրենց հետ բերում էին անարդարություն, նա բնականաբար լցովում է ատելությամբ զեպի այդ լեզուները, մասնավորապես՝ զեպի Քրանսելենը: Հեղինակը չի ցանկանում իր բերանը դառնացնել օտարի լեզվով: Այդ լեզուն նրա համար «կծու» և «թթու»: «Եօն յօւր» բանաստեղծության մեջ (№ 75, էջ 88) իրեն հետ Քրանսելեն խոսող օտարերկրացի պարոնին ասում է.

Գնա, պարոն, էրթաս պարով, համ կծու ես, համ թթու.

Ինայի բերանս անհամ է, քեզանով էլ ի՞նչ դառնացնեմ:

Առաջին ձեռագրատերում հեղինակի կողմից հիշված աշխարհագրական վայրերին այս ձեռագրատերն ավելացնում է նոր անուններ՝ Անի, Վան (№ 79, էջ 90), Լազոսան (№ 80, էջ 21), Հունաստան (№ 80, էջ 21): Այս անունները նորից ապացուցում են, որ հեղինակը քաջ ծանոթ է Թյուրքայի և, մասնավորապես, Թյուրքահայաստանի միջավայրին: Հիշատեկության արժանի է նաև այն փաստը, որ հեղինակը հիշում է Պարսկաստանը (№ 80, էջ 21), Եփրատի ջուրը (№ 86, էջ 97), Եղեսիան, Մեսելեն (№ 79, էջ 90) և այլն:

Տեղեկացիք 6—6

Աշուղ-բանաստեղծը իրազեկ է պատմության վաստերին: Այդ մասին վկայում են բիբլիական առասպելական և պատմական անձնավորությունների անունները, որոնք հանդիպում են այս ձեռագրատետրում, «Սուրբ Ղազարոս», «Քույր Մարթա», («Փեսային», № 66, էջ 83), Ագամ (№ 74 էջ 87), «Հովսեփ», «Սահակ», «Լուտեր», «Խաղիս», «Խորենացի» (№ 76, էջ 88), «Մեծն Արքար Արշամյան», «Հիսուս», «Թատթենոս», «Սուրբ Բարտուղիմենոս», «Սահամարուկ», «Տրդատ», «Գրիգոր Երդնկա», «Մեսելացի Ներսեսներ» (№ 79, էջ 90), «Մարկոս Օվլի Ավլ», «Սամբան», «Խորայիլ», «Սուրբ Արքհամ» (№ 80, էջ 92), «Գետրեա», «Մաղքոս» (№ 84, էջ 96), «Հեղոնդ», «Հովսեփ» (№ 83, էջ 97), «Լանկ-Թեմուր», «Սուրբ Կարապետ» (№ 88, էջ 99), «Սուրբ Նարեկացի» (№ 101, էջ 105) և այլն:

Հատուկ ջերմությամբ նա հիշում է հայ մատենավիրներին:

Մեր երջանիկ Հովսեփ, Սահակ երբեք Լուտեր չի լինիւ.

Խաղի Գյուտիք քարոզները բնավ սուտել չի լինիւ.

Խորենացլու պատմությունը կետը սուտել չի լինիւ.

Զվատահենք անգլիացուն, չի լինիւ մեզի սատար:

Չմոռնանք մեր երջանիկ թարգմանչաց հայ տառերեն,

Անարգելով նուշն ու գեղձը՝ սիրենք անպետ ծառերեն.

Հարգենք աչքն ու եկեղեցին, համբույր տանք սուրբ քարերին.

Թողին ավանդ մեր նախնիքը...

Բանաստեղծն ունի գեղեցիկ սիրային երգերի նմուշներ, որոնք են. «Գրիշեա» (№ 67, էջ 84), «Տոււեյիթ» (№ 72, էջ 86), «Մըմունջ վարդի» (№ 76, էջ 88), «Դանգատ» (№ 78, էջ 89), «Սիրահար» (№ 90, էջ 100), «Գթա» (№ 95, էջ 102), «\* \*» (№ 96, էջ 102), «Ե-ին» (№ 98, էջ 103), «Խաղ» (№ 99, էջ 104), «ԶԵ արդյոք» (№ 103, էջ 107), «Սիրական» (№ 104, էջ 107), «Սիրելի» (№ 105, էջ 108), «Ասել են» (№ 106, էջ 108) և այլն:

\* \* \*

Ինային ներկայանում է մեզ որպես աշուղ-բանաստեղծի մի հետաքրքրական գեղք, իսկ նրա պոեզիան՝ րաֆֆիական շրջանի ժողովրդական տրամադրությունների, զգացմունքների անմիջական արտահայտության մի ռազմական երեսություն:

Սուրբ բերում ենք բանաստեղծի երգերից 6 նմուշ՝ «Ում պետքն է», «Լանկ-Թեմուրն ի Մուշ», «Ճիլյաներն ի Պայազետ», «Տոււեյիթ», «Գանգատ» և «\* \*»:

### ՈՒՄ ՊԵՏՔՆ Է

Օտարի գուռը ման գալուվ հաց եմ ասում, ում պետքն է.

Բոլոր զոներին զարնելով՝ բաց եմ ասում, ում պետքն է.

Ծարավ, քաղցած, մերկ ու բորիկ շատ երկրներ ման զալով,

Անողորմ մարզոց զոները լաց եմ ասում, ում պետքն է:

Քննելով շատերու սիրտը վրաս փորձեցին սուրբ,

Պապակած ընկել եմ գետին, զլանա մին պաղ ջուրը,

Ու մինչև ե՞րբ ինձի վառի ատելության լավող հուբը.  
Այս հոգեարք վիճակումս կաց են ասում, ում պետքն է:

Մի խրոխտար, ով ինայի, չի մնալ այդ քսակը.  
Բաց է զեմդ թշվառության կորստական լճակդ.  
Քո գլխիցդ էլ կփախցնեն ուսնեցած հին գտակդ.  
Նըսնից վերջը քեզ համար կաց են ասում, ում պետքն է:

### ԱԱՆԿ-ԹԵՄՈՒԻՐՆ Ի ՄՈՒՇ

Անունտի մնա Լանկ-Թեմուր,  
Խետտի բերիր խանչալ ու թուր,  
Խատուցիր գու մըր խաց ու ջուր:  
Վայ անիծուկ վայ Լանկ-Թեմուր, } ամեն տան վերջում  
Քո սուրաթնի թող ծածկա մուր: } կրկնվում է:

Մընք դժոր գնանք մըզի հավար,  
Թալան արեց մալ ու տավար,  
Ի՞մալ գտնենք ցորեն, ձավար:

Օլուղ-չոլուղ խեղճ ու տկլոր  
Մընք դժոր տանենք զըմմեն բոլոր,  
Խտզար պնդամ եկավ էտ դոր:

Մոնեմ քըզի սուրբ Կարապետ.  
Դու պախպանիս մըր գառ ու ճետ,  
Զգայր մըզի մըր ճժու խետ.

Չունենք ախարեր, նը պապ, նը մամ,  
Նը խնամի, նը բարեկամ.  
Չըմ զինա իս, թե դնը երթամ:

Ա՛խ, կարավան, գու գժը անցար,  
Մըր խալին չին ի գա հավար,  
Աձման խասավ մըր մալն հավար:

Մոսն կիլա ու խաց կուզա,  
Խաց չկա, սիրտս կու վազա.  
Մշու տաշտը տարան տաղա:

Բոսոն զնաց քիսավ դարիպ,  
Թըդ ի գա մըր լոխման թապիպ.  
Սուրբ Կարապետն ա մեկ խատիկ:

Հանպըտանք էս իըման օրին,  
Չընք դիմանար աճմա չոռին.  
Տեսկք կիլա Մշու ձորին:

Իըման աստված էղնիս պառեկ,  
Ստեղծել էս զրդուս սարեկ.  
Մըր ճամբեն ա մըկա չարեկ:

## ՃԻՌՈՅՆԵՐՆ Ի ՊԱՅԱՋԵՏ

Օսմանյան օգնություն... ճիլոյներ հասան.

Բարբարոս քրդական... միջոց անսահման.

Պայտղետի ձայներն... երկինք բարձրացան,

**Տեսէք** հայ աղջկան... լողա մեջ արյան. } ամեն տան վերջում  
Զկան] հայ մանուկներ... ի զուր գոհվեցան. } կը կնվում է:

Անգութ են ճիլոյներ... փորձելով նիզակ.

Մայրերը կփնտրեն... յուր որդին միակ.

Արտերի ակոսը... լիցուցավ դիակ:

Երկնքեն չկտրի... անձրեն ու ցողը,

Պատուած են ահա... հարսնության քողը.

Պահեցեք սերմերը... չտանի գողը:

Չինաց տաճարը... սրբություն սրբոց,

Լցվեցավ Պայտղետ... սուր ավար ու բոց,

Բարձրացավ մինչ երկինք... աղաղակ ու բոց:

Մայրերու գրկերեն... որդին փախուցին.

Պառավակ ու ծերունին... սրով փախցուցին.

Զարդերու լուրերը... մրին հասցուցին:

Ծնողքը կփնտրեն... իրենց զավակներ.

Խորտակվել են սաստիկ... սիրո նավակներ.

Զկան սուրհանդակներ... և ոչ նավակներ:

Նկատեք աղջկան... պարկեշտությանը.

Ափսոս զոհ եղել է... ճիլոյան տանը.

Ավագ հայ տղային... ի զուր մահվանը:

Անմեղը զոհվելով... սլացավ երկինք.

Բողոքներ կկարդա... թե բավ է Ակինք.

Քանի՞ մեկ, քանի՞ մեկ... չարչարվինք, էրվինք:

Խսդրեցեք երկնքեն... եղեմյան հանգիստ.

Հերիք է չարչարվինք... անիրավ ու միշտ.

Արյունով անցուցին... ծարավները խիստ:

Զարդարանք, պաճուճանք... թողեք աշխարհին.

Հույս դրեք ու գործեք... ի սեր անճառին.

Դուցե նա այցելե... աղքատ անկարին:

## «ՏՈՒՊԵՑԻԹ»

Արին, սիրնեն, ուրախացուր,

Սիրսս վաղուց է գալարած,

Տեսնեի ծիծաղ պատկերդ,

Սիրտդ ինչով է զարդարված:

Քո ոսի տակի հողն եմ ես,  
Կարոտության քողն եմ ես,  
Տեսությանդ գողն եմ ես,  
Ցույց տուր գեմքդ լայնատարած:  
  
Տեսնեի գեմքդ սիրելի  
Թշնամաց գեմ անպարտելի.  
Բժիշկներին ես հարցըի.  
Դու ես իմ գեղս հարմարած:  
  
Խեղճ Ինային քո դրանտ  
Գութ է խնդրում գանձարանետ,  
Ով չի վախում դատաստանետ,  
Նա է սրտով հաղթահարած:

## «ԳԱՆԳԱԾ»

Սրտիցս չի վերջանալ անմարելի սիրո բոցը,  
Մինչև երկինք սյուն է կանգնել հառաչանքը և կոծը.  
Պարզ էր սերդ, որ սիրեցի, բաժինս եղավ հնոցը:  
Օ՛հ, արարիչ, մուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը:  
Խնդրում եմ միշտ արարչիցս, չթարշամի քո գեղը.  
Թե կամեցար սիրել սրտով, ստախոս էր քո ցեղը.  
Բաժանվեցար դու ինձանից, դժոխք լինի քո տեղը:  
Օ՛հ, արարիչ, մուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը:  
Խեղճ Ինայիս աղաչեցի, չնայեցիր երեսիս.  
Ո՛չ կամեցար ինձի սիրել ռչ հարազատ ընկերիս.  
Չլսեցիր իմ խորհուրդը, անիծել եմ կերերիս:  
Օ՛հ, արարիչ, մուր է գնում, իմ սրտիս խորունկ խոցը:

\* \* \*

Պատահեցի սիրունների երամին.  
Ոչ ոք չկար ընտիր սիրելուս նման.  
Ինչպես սիրեմ վայրի անպիտ գերանին,  
Որ չունի ողկույզ ճիռ սիրելուս նման:  
  
Այն պատկերը սուրբ էր, տեսածս սուտ էր.  
Նրանը հաստատուն, սրանը փուտ էր.  
Հացին չէր ախորժիլ, բանջար շատ կուտեր.  
Եվ չէր առույգ ու ժիր սիրելուս նման:  
Ինայի ինձ լսես խոսքիտ կապ դնես.  
Սիրունների համար գրչիտ չափ դնես.  
Ակոսիտ անունը ազարակ դնես.  
Եթե ոչ դու լոիր սիրելուս նման,

Анаида Харатян

## Еще о забытом поэте Хачатуре Эхрамчянце

## Резюме

Проф. Л. Меликсет-Бек в 1940 году в „Известиях Арм. Филиала Академии Наук СССР“ (№ 4—5, стр 73—80) поместил сообщение о первой части рукописного сборника армянского ашуга-поэта Хачатура Эхрамчянца (Ашуг-Инай), издание которого было запрещено царской цензурой. Недавно в архиве б. Кавказского Цензурного Комитета обнаружена вторая часть вышеупомянутого рукописного сборника, являющаяся непосредственным продолжением первой части и также не допущенная к изданию.

Вторая часть сборника песен Хачатура Эхрамчянца носит заглавие: „Продолжение Карени срнгин“ (по-армянски). В нее входят 54 песни, из коих цензором полностью вычеркнуты 10, а частично одна.

Автор рукописи представляется нам как интересная личность ашуга-поэта, а его поэзия — как непосредственное выражение настроений армянского народа времени Раффи.

Ашуг-поэт в своих песнях хочет видеть свою родину, как сам выражается, „просвещенной“, „свободной“ и призывает служить ей и ее прогрессу.

Но армянский народ, постоянно подвергаясь насилию, угнетению со стороны восточных варваров, вынужден эмигрировать. Это глубоко трогает поэта, поэтому он с волнением вспоминает нашествие Тамерлана, затем чудовищную по своей жестокости резню армян турками.

Народ, эмигрируя, попадает в негостеприимную среду. В новой стране, как и в пресловутых католических и протестантских „Миссионерах“, он не находит „правды“ и оплакивает трагическое положение своего народа.

Одновременно он с злым сарказмом высмеивает армян-богачей, которые скупы даже по отношению к своей родине.

Автор, выходец из Карина (Эрзерум), в своих песнях, полных автобиографических данных, подчеркивает, что он представитель народа труженика и ему некогда воспевать цветы, что он претерпел много лишений и неудач, что его мечты полностью не осуществились. Но ему некому жаловаться, т. к. царское самодержавие „связало“ его „свободный язык“.

Ашуг-Инай владеет литературным языком, является образованным человеком своего времени. Об этом свидетельствуют его песни, изобилующие именами исторических и опольско-мифологических лиц, знаменательными фактами истории. Кроме того, одна песнь — „Ланк-Темур в Муше“, написанная на мушском диалекте, представляет собою ценный материал для армянской диалектологии.

A 3/69

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031697

[204]

A II  
31697